Մայր Աթոռիս միաբան Տէր Մեսրոպ եպիսկոպոսը խնդրում է տպագրել հետեւեալը.

ՆՈՒԷՐՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Տփխիսից՝

1. *Գ. Յարութիւն Փիրալեանից ստացայ ոսկեայ շրջանակ «Տուր զԿայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ» 1864 թ. Ամստերդամի հայոց եկեղեցուց Ս. Էջմիածին բերուած նշանաւոր նկարի համար:*

Բագուից՝

2. *Տիկին Եղիսաբէթ Սարգսեանից ստացայ «Անիի աւերակները» իւղաներկ, մեծադիր, ոսկեայ շրջանակում նկարը, գործ Գ. Բաշինջաղեանի:*
3. *Բժ. Թ. Զաքարեանից ստացայ Բագուի մի խումբ հայերի ձեռքով գնուած «Խաչատուր Աբովեանի Տնակը» ոսկեայ շրջանակում, նկարը, գործ Գ. Բաշինջաղեանի:*
4. *Գ. Անդրէաս Սարգսեանից, ստացայ մի հատ ամերիկեան նորագոյն սիստեմի մետաղեայ վառարան, էմալլով:*
5. *Գ. Միքայէլ Պապաջանեանից ստացայ մի արծաթեայ թաս, ոսկէջրած այսպիսի յիշատակարանով.* «Ի վայելս Սիմեօն արքեպիսկոպոսին Բզնունեան 1816»:

Սեւանայ մենաստանից՝

6. *Ստացայ երեք արկղ ձեռագիր մատեաններ, որի մասին մանրամասնութիւնը յետոյ կհաղորդեմ:*

Բոլոր նուիրատուներին մեծապէս շնորհակալութիւն եմ յայտնում:

Մատենադարանապետ՝ Մեսրոպ եպիսկոպոս.

1911 *թ. դեկտեմբեր* 20.

Մայր Աթոռս լուսարարապետ Տ. Ղեւոնդ եպիսկոպոսը խնդրում է տպագրել հետեւեալը.

Ատրախանի թեմական Առաջնորդ գեր. Տ. Մխիթար եպիսկոպոսը ամսոյս 7-ի թ. 560 գրութեան հետ ուղարկել է տասնեւերկու ուրաբ, որոնք նուիրել են Ատրախանցի մի քանի բարեպաշտ ազգայիններ Մ. Տաճարի գործածութեան համար ըստ այսմ.

1. Տ. Գալուստ քհնյ. Քարտաշեանի միջոցով՝

ա) Տիկին Վառվառէ Յարութիւնեան Վարդանեան, ի յիշատակ իր վաղամեռ չորս զաւակների 4 ուրաբ

բ) Եղբարք Վազարեաններ, ի յիշատակ իրենց մօր՝ հանգուցեալ Վառվառէի . . . . . 2 »

գ) Ստեփաննոս Ֆրանգուլեանց, ի յիշատակ իր ծնողաց . . . . . 2 »

2. Տ. Ղեւոնդ քհնյ. Այանեանի միջոցով՝

ա) Գրիգոր Կիթայեանց, ի յիշատակ իր ծնողաց 1 »

բ) Մանուկ Կիթայեանց իր առողջութեան համար 1 »

3. Տ. Սարգիս քհնյ. Ալանեանի միջոցով՝

ա) Ատրախանցի Յարութիւն Եսայեանց . 1 »

բ) » ալրի Թադուհի Մեհրապեանց 1 »

Օրհնելով բարեպաշտ նուիրատուներին առանձին առանձին գրութիւններով և յայտնելով գեր. Մխիթար եպիսկոպոսին իր միշտ առ Մ. Տաճարն ունեցած նախանձախնդրութեան համար, խնդրում եմ յարգելի խմբագրութեանդ այս մասին հրատարակել Արարատի մերձակայ համարում անփոփոխ։

Մայր Տաճարի Լուսարարապետ՝ Ղեւոնդ եպիսկոպոս